

ՏԱՍԵՆՈՐԻՒՄ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դիմը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն անդադրատան մեջ:

Օտարապետացիքը դիմում են ուղղակի

Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաջօրեան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունելու է ամեն լիզովով:

Յայտարարութիւնների համար զմարում են խրատանցիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: «Кавказский Курьер» լրագրի յոգևածը: Նամակ Ս. Պետերբուրգից: Նամակ Զաքարյանից: Ներքին լուրեր: Արտագրին տեսութիւն: Գերմանիա: Անգլիա: Իրանդական պատգամաւորների յայտարարութիւնը: Թիւրքիա: Նամակ Թիւրքիայից: «Մշակի» ներագրիներ: Յայտարարութիւններ: Բանասիրական: Հիպոտեկական սխեմա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«КАВКАЗСКИЙ КУРЬЕР» ԼՐԱԳՐԻ 80-ՂՈՒՍԾԸ

«Հայերի պատմական վիճակը և նրանց պարբերական հրատարակութիւնները» վերնագրով «Кавк. Кур.» լրագրի մասին և հետևեալ յոգևածը:

Այս վերնագրով մենք մեր լրագրի մէջ մի նոր բաժին ենք սահմանում, որ կը բովանդակի ամենքի ուշադրութեանը արժանի հայոց մամուլից վերցրած կարճատև և մանրամասն տեղեկութիւններ: Անկասած զրա համար գլխաւորապէս նիւթ կը տան մեր տեղական հրատարակութիւնները, «Մշակ» և «Մեղու» լրագրիները և «Փորձ» ամսագիրը: Բացի այդ մենք կը ծանօթացնենք ընթերցողներին գաւառական և Ս. Պոլսի պարբերական հրատարակութիւնների հետ: Բայց առաջ քան թէ սկսենք այդ գործը, հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել այն մեծ նշանակութեան մասին, որ ստացան ժամանակակից կեանքի մէջ հայ լրագրիները, իբրև նշանաւոր և ուժեղ գործիչներ օգտակար մտքեր և գաղափարներ տարածելու համար հայ ամբողջ մէջ Ռուսաստանի, Թիւրքիայի և Պարսկաստանի սահմանների մէջ:

Մի քանի տարի առաջ ռուսական և եւրոպական մամուլը շատ քիչ տեղեկութիւն ունէին հայոց անկախ պարբերական գրականութեան մասին: Հայ լրագրիները իրանց եւրոպական և ռուսական եղբայրակիցներէջ օգնութիւն չէին խնդրում իրանց գոյութեան և զարգացման համար և ինքնուրոյնաբար ու անձնազոհութեամբ աշխատում էին զարգացնել և մշակել ազգը և հարուստ նիւթ քաղելով բուն ժողովրդական կեանքից, նրա տնտեսական և բարոյական պայմաններից, ամուր կապերով միանում էին ժողովրդական շահերի, զաղափարների և ձգտումների հետ: Այսպիսի գոյութիւն ունէր և այսպէս էր զարգանում տեղական հայ մամուլը մինչև վերջին ռուս-թիւրքական պատերազմը:

Հայաստանը, այդ բառի ընդարձակ նշանակութեամբ, որ պարունակում է իր մէջ ամբողջ Փոքր-Ասիան, Նեյրանի և Շորաքեալի նահանգը Ալեքսանդրոպոլի գաւառի հետ, ինչպէս յայտնի է անցեալ պատերազմի ժամանակ պատերազմական գործողութիւնների մի ընդարձակ բեմ էր ներկայացնում, որտեղ նշանաւոր համաշխարհային պատմական անցքեր էին կատարվում:

Ամբողջ եւրոպան և Ռուսաստանը, գիտակցական կեանքով ապրող երկրագնդի բոլոր ազգութիւնները իրանց հայացքները դարձրին Հայաստանի վրա, այդտեղ կատարվող անցքերի վրա, իսկ «Հայաստան» և «Հայեր» բառը դեռ ևս չեղած ժողովրդականութիւն ստացան յիշեալ ժողովուրդների և երկիրների գրականութեան, դիպլոմատիայի, քաղաքականութեան և հասարակական շրջանների մէջ: Ան-Ստեֆանոսի դաշնագիրը, այնուհետև Բերլինի կոնգրեսը, գրաւեցին ազգերը զեկաւարդող դիպլոմատների ուշա-

դրութիւնը դէպի հայկական հարցը, վերաբերեցին հայ ազգի ինքնուրոյն զարգացումը, իբրև մի ամբողջացած ազգութիւն, պատմական փառաւոր անցեալով, մեծ ընդունակութիւններով եւրոպական քաղաքակրթութեան պտուղները ըմբռնելու և նրանց հաղորդելու արևելեան ժողովուրդներին, որոնք տգիտութեան մէջ խմորված են և վերջապէս իբրև չափազանց հարուստ հին և նոր գրականութիւն ունեցող ազգ:

Այդպիսով 1877—78 թ. պատերազմից յետոյ հայերի և Հայաստանի համար,—գործի պատմական տեսակետից նայելով, չը յիշելով նրանց ահապիսի զոհաբերութիւնները, սարսափելի կոտորածը և Փոքր-Ասիան ոչնչացնող հրդեհները,—հասաւ հայ ազգի վերածնելութեան, նրա գիտակցական կազմակերպութեան և բարոյապէս կենսորոնանալու ժամանակը: Այդպիսի ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ հայերից պահանջվող սարսափելի զոհերը նոր կեանք և պատմական բարձր նշանակութիւն տուին թիւրքաց Հայաստանին: Այդ ժամանակ Հայաստանի վաղուց մուսուլման փառաւոր պատմական անունը թափեց հնութեան փոշիները, ներկայացաւ լուսաւորված աշխարհին և գրաւեց եւրոպական բոլոր պետութիւնների և ժողովուրդների համակրութիւնը և յարգանքը:

«Հայ» անունը, որ մինչև այդ ժամանակ գործ էր անցնում իբրև պատմական տերմին, որոշ ձև ստացաւ և կայսերական պալատներից սկսված մինչև միսիստրների առանձնատեսակները գիտական հետազոտութիւնների, դիպլոմատիական և քաղաքական խորհուրդների և հարցերի առարկայ դարձաւ:

Արանք են պատճառները, որ այժմ հայ-

երի անունը ամենքին ծանօթ է, նրանց պատմութիւնը քաղաքացիութեան իրաւունք ստացաւ եւրոպական կրթութեան գործի մէջ և հայը հպարտ և համարձակ, ամեն տեղ և միշտ կարող է բարձր պահել իր գլուխը և ասել. «ես հայ եմ»:

Ուրեմն չը պէտք է խղճալ հայերին, որ նրանք եւրոպայի կեանքի և ժամանակակից պատմութեան մէջ պատուաւոր դիրք ստանալու համար նշանաւոր զոհեր արին, գիտեանալով, որ այդպիսի իւրաքանչիւր նշանաւոր քայլը ազգերի պատմական կեանքի մէջ միշտ մեծ զոհեր է պահանջում և եթէ հայոց ազգային գործի առաջադիմութեան համար դարձեալ նոր զոհեր կը պահանջվեն, թող հայերը չը խնային և այդ զոհաբերութիւնները ազգային առաջադիմութիւնը պատկեր համար, ազգային կանոնաւոր գոյութիւնը ապահովելու համար: Բայց ի՞նչն է պատճառ, որ արևելեան ժողովուրդների միջից հայ ազգը արժանացաւ լուսաւորված եւրոպայի ամենամեծ համակրութեանը: Այդ պատճառը պարունակում է հայոց ազգին յատուկ ձգտումները մէջ ոչ թէ միայն քաղաքակրթվել, այլ և տարածել այդ քաղաքակրթութիւնը և եւրոպական կուլտուրան Ասիայի ժողովուրդների մէջ:

Եւրոպան արդէն կազմեց մի ձիւղ և նշանաւոր համագնակը հայ ազգի կոչման մասին. գրեթէ բոլոր պետութիւնները հաւատացած են, որ վերջը Փոքր-Ասիան կը պատկանի այն պետութեանը, որ միւսնեւրից աւելի կը կարողանայ գրաւել հայերի համակրութիւնը:

Ո՞ր հայը կարող է չուրախանալ, որ պատմական հանգամանքների շնորհով հայկական ազգային գրոշակը այդքան բարձր

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հիպոտեկական սխեմա (Гипотечная система)

Նոր կարգադրութիւն անշարժ կայքերի մասին

Լրագրիները յայտնում են, որ մոտ ժամանակներում պետական խորհրդում պէտք է քննվի Ռուսաստանում հիպոտեկական սխեմայի մտնելու հարցը: Այդ սխեման, որ վաղուց արդէն ընդունված է արևմտեան եւրոպայում, 1859 թ. ակտից սկսած մի քանի անգամ քննվել էր կառավարութիւնից նշանակված յանձնաժողովներում, բայց մինչև այժմ ոչ մի որոշ կարգադրութեան չէր բերել: Յայտն է, որ այս անգամ պետական խորհուրդը վերջնականապէս կընդունի նրա քննութեանը առաջարկած ծրագիրը:

Այդի առաջ առնելով այդ իրաւարանական նորութեան ահապիսի նշանակութիւնը, մենք կաշխատենք այս յօդուածում որքան կարելի է հասարակ և հասկանալի կերպով ծանօթացնել մեր յարգելի հասարակութիւնը մտնելի սխեմայի հետ:

Յայտն է, որ ամենօրեայ կեանքում ամեն մի կալուածատէր, հողատէր և առևտարակ ամեն մի անշարժ սեփականութեան տէր բազմա-

մաթիւ հանգամանքներից ստիպված է լինում գրաւ դնելու (закладывать) իր կայքը կամ կրեդիտական հիմնարկութիւններում կամ մասնաւոր կապիտալիստների մօտ, որ կարողանայ ստանալ նրանցից իրան հարկաւոր գումարը: Կարծիք չը կայ, որ թէ հիմնարկութիւնները և թէ մասնաւոր կապիտալիստները կընդունեն որպէս գրաւական միայն այնպիսի անշարժ կայքեր, որոնց սեփականութեան իրաւունքը բոլորովին ամուր և հաստատ է, այսինքն, երբ նրանք կը համոզվեն որ այս ինչ կայքը օրէնքով պատկանում է նրան, ով գրաւ է դնում: Որովհետև ներկայ հասարակական կեանքի պայմաններում անշարժ կայքերի գրաւ դնելը մի շատ տարածված և մինչև անգամ անհրաժեշտ երևոյթ է, հասկանալի է թէ որքան նշանաւոր է անշարժ կայքի տիրոջ համար, որ նրա սեփականութեան իրաւունքը անվիճելի, ամուր և հաստատ լինի:

Ով որ գործնականապէս ծանօթ է մեր քաղաքական օրէնքների հետ, նրան լաւ յայտնի է, թէ որքան խախտու և անապահով է այդ իրաւունքը: Գուր գնել էք, օրինակ, մի այգի, կատարելով օրէնքի բոլոր պահանջները, այսինքն՝ ստացել էք դարաւա (купчая крепость), введённую в оборот, — կը նշանակէ դուք համարվում էք այդու օրինաւոր տէրը: Բայց կարող է պատահել, որ դուք կը գալ մէկը և կը յայտնի, որ այդու սեփականատէրը (собственник) ինքն է, որովհետև այդու ծախողը սեփականութեան իրաւունքը չունէր կամ այդ իրաւունքից դուրկ էր այն անձը, որից դնել է կամ ուրիշ կերպ ձեռք է բերել այգին ծախողը, — այգին ձեռք ձեռք

քից կը խլին: Իսկ եթէ դուք գնելուց յետոյ գրաւ էք դրել այգին, այն ժամանակ բացի ձեռքից կը վճարվի և գրաւականը (залогодержатель): Այդպիսի պատահումները քիչ չեն լինում: Ի՞նչ է դուք գալիս: Գուր օրինաւոր կերպով ձեռք էք բերել այգին, բայց իրականապէս չէք կարող ձեռք կատարել սեփականատէր համարել: Գուր կարող էք հանգիստ լինել միայն այն ժամանակը, երբ կը լրանայ давность-ը:

Բացի այդ նշանաւոր պակասութիւնից կան և որինչները: Օրինակ, մեր օրէնքներով արգելվում է մի մասնաւոր անձի մօտ գրաւ դրած անշարժ կայքը երկրորդ անգամ գրաւ դնել մի ուրիշի մօտ (քաղ. օրէն. 1630 յօդ.): Այդ արգելումը շատ գիտաբարութիւններ է պատճառում մասնաւոր այն տեղերում, ուր չը կան կրեդիտական հիմնարկութիւններ: Գիցուք ձեռք կալուածք արժի 10,000 ռուբլ: Գուր գրաւ էք դնում նրան մի մասնաւոր կապիտալիստի մօտ և վերցնում, օրինակ, 1000 ռուբլ: Մինչև որ դուք չը վճարէք այդ 1000 ռուբլին և չազատէք ձեռք կալուածքը, չունէք իրաւունք երկրորդ անգամ գրաւ դնելու, թէև ձեռք կալուածի գինը 10 անգամ բարձր է գրաւակալից ստացած գումարից:

Անշարժ կայքերի մասին գործող սխեմայի երկրորդ պակասութիւնը բաղկանում է նրանում, որ այդ կայքերի վերաբերութեամբ կատարվող բոլոր գործողութիւնները (акты) կապված են անհամար գիտաբարութիւններով, մեծ ծախսերով և ժամանակի կորուստով: Գուր գնում էք մի կայք, — հարկաւոր է անպատճառ փոքր և աւագ նոտարիւսի մօտ լինել, ահապիսի ծախսեր անե-

լով և ժամանակ կորցնելով հաստատել դարաւա, յետոյ ստանալ вводе во владение, որ բոլոր իրաւարանները վկայութեամբ մի շատ աւելորդ և դուր գործողութիւն է: Գուր պարգևում էք մէկին ձեռք կայքը, հարկաւոր է համարակ նոյն գիտաբարութիւններով հաստատել дарственную запись, դուք գրաւ էք դնում նրան, — հարկաւոր է հաստատել закладную крепость երկու վկաների ստորագրութեամբ և այլն...

Այս բոլոր գիտաբարութիւնները բոլորովին կանխատեսան, երբ մեր աղբիւրեան մէջ կը մտնի հիպոտեկական սխեման, կամ հիպոտեկական գրքերը: Անշարժ կայքերի վերաբերութեամբ բոլոր գործողութիւնները կը դառնան շատ հասարակ, շատ հեշտ և շատ էժան:

Տեսնենք ինչու մեծ բաղկանում այդ սխեման: Ամեն մի քաղաքում, այս կամ այն դատարանում կը պահվի մի առանձին գրքը, որ կը կոչվի «հիպոտեկական»:

Այդ գրքի ամեն մի երեսը զիջելով բաժանված է չորս սիւնի (լինում է և երեք):

Նրա վրա կալքի նկարագրութիւնը:	Նրա վրա կալքի պարտականութեանը:	Սեփականատէրը:	1) 4000 2) 2000 3) 1000
-------------------------------	--------------------------------	---------------	-------------------------------

1) Առաջին սիւնի մէջ գրվում է մի որ և է անշարժ կայք իր մանրամասն նկարագրութիւններով: Օրինակ, գրվում է ձեռք այգին և նրա բոլոր նկարագրութիւնը, որի կարգացող կարող

է կանգնած: Ա՞ր հայը իր մարդկային մասնաւոր գործունէութիւնով, զիտակաւոր, որ թիւրքաց շայտատանի ազատութեան և զարգացման համար ամենից առաջ անհրաժեշտ է լուսաւորութիւնը, կրթութիւնը, կը խնայէ իր լուսնայնայն մարդասէր և պատմական մեծ նշանակութիւն ունեցող գործի համար: Իւրաքանչիւր հայ, որ զընտանաւորութիւնը իր հայրենիքի, իր ազգային օրօրօցի պատիւը և ապագան, ուրեմն և իր սեփական պատիւը, սրբազան պարտք պէտք է համարի անդադար օգնել այն ընկերութիւններին և ազգային գործի այն առաջնորդներին, որոնց գործունէութիւնը նուիրված է հայ ազգի առաջադիմութեանը և աջողութեանը:

Ինչպէս յայտնի է, հայ ամբօրնի մէջ կրթութիւն ծաւալող գործիչները ոչ թէ միայն ուսուցիչներն են, այլ գլխաւորապէս գրականութիւնը: Գրականութեան մի ճիւղը, լրագրութիւնը գործում է իբրև ազգային լուսաւորութեան պահպան, իբրև հասարակական կարծիքը արտայայտող, իբրև ժողովրդական ձայն, որ ամեն տեղ լսվում է և, զարթեցնելով հարցեր ազգային պէտքերի մասին, ստիպում է ամենքին խնայարժեք իր առաջ, իր ազդեցութեան առաջ, որ լին է հասարակական գիտակցութեամբ և հեղինակութեամբ:

Հայերը պարտաւորված պէտք է ունենան իրանց ձայնը քաղաքական շրջանների մէջ և դա պէտք է լինի հայ պարբերական մամուլը: Սրանից մի քանի տարի առաջ, ինչպէս վերև ասացինք, թէ Ռուսաստանի և թէ այլ երկիրների մէջ շատ քիչ գիտէին հայ լրագրիչների գոյութեան մասին: Բայց այժմ հայկական մամուլի ձայնը ամեն տեղ լսվում է, հայ լրագրիչների յօդուածները և լուրերը առատ նրբութեամբ և սուսաց և եւրօպական լրագրիչներին:

Այս հանգամանքն էլ մեծ պատիւ է բերում հայերին: Բայց տարբարգրաբար հայ լրագրիչների վիճակը նրբութեամբ կողմից ապահովված չէ և թէ հայ լրագրիչները ինքնազուհետ չեն գործէին՝ ոչ մի հայ լրագիր կոմիտէի մէջ հաստատ և ապահով գոյութիւն չէր կարող ունենալ:

Քանի որ այլ ազգութիւններ լրագրիչները մեծ եկամուտներ են տալիս իրանց հրատարակողներին, հայ լրագրիչների խմբագիրները իրանց վնասները տասնակ հազարներով են հաշուում:

Եթէ հայերը կամենում են պահպանել իրանց անուան պատիւը, թող նրանք համարութեամբ և գործով օգնեն հայոց պարբերական հրատարակութիւններին:

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐՈՒԲՈՒԴԻՑ

Յունվարի 28-ին

Ս. Պետերբուրգում բացի հայ ուսանողների ընկերութիւնից և ժողովից, կայ նաև մի այլ ընկերութիւն, որի անդամները բաղկանում են թիֆլիսից նորեկ հայ և վրացի երիտասարդներից: Վերջիններս՝ յօդուած իւրեանց չբարձր ընկերակիցները, յունվարի 25-ին, պ. Կոնստովի տանը, թատրոնական ներկայացումներ տուին վրաց և հայոց լեզուով: Խաղաղութիւնը պ. Յազարբէկի հեղինակ. կոմիդիա երեք արարողութեամբ «Ճամանակներն այժմ փոխված են». իսկ հայերեն՝ «Կա էլ քի մոցիբութիւն» վոլովիւլ Տէր-Գրիգորեանցի:

Նրկու պիտաններն էլ շատ յաջողակ կերպով կատարվեցան: Այսպէս օրինակ, վրացերէն կոմիդիայի առաջին արարողութեան մէջ կերբում են դուրս գալիս լոթի կինոտները, նրանց ուրախ ձայն ու աղաղակը, կոնտրաստները, կենաց բաժակները հետեւալ խօսքերով, խմնք այն լայտորի կենացը, որ վերջում լուսաւորում է մեր ճանապարհը և այն է այն, կոտորեալ գաղափար են տալիս թիֆլիսի ստորին դասի ժողովրդական բարք ու վարքի մասին: Լաւ էին նոյնպէս առանձին տեսարանները, ինչպէս օրօր. Գիթուայի (Անդրանիկով) յանդիմութիւնը և վէճը իշխան Զարարիս-չիլիլի (Ռազիկով) հետ, որանց կուրը, բարեկամների միջամուխ լինելը խաղաղութեան հաստատելու համար: Կուր պատճառն այն էր, որ իշխանը փախերէր էր օրիորդ թատիկային, որ Գիթուայի մտերիմ բարեկամ Սաքոյի հարսն էր համարվում: Զայրացած կինոտներն անբարկով Զարարիս-չիլիլու բռնութեան դէմ, կը լինէր իր բարձր հոգնակ և կը բռնէր իրան վայելուչ տեղը հայ հասարակութեան մէջ: Ժամանակ է, վերջապէս, հնութեան փոշու հետ, թօթափել մեղինք արեւելեան գարշիլի բռնաւորութեան աղբիւրները: Գիտում, որ իմ հարեւանցի նկատողութեանս, մեր մի քանի grande dame ձևացող աղջիկ պարուները տհաճութեամբ պիտի սենեն, fi donc! что за неумѣстная мораль: Բայց այսպիսիները վրա են կարող եմ միայն ցուցել: Տեսնենք, ո՞վ յաղթող կը հանդիսանայ, անձ-

նի պահանջելու, որ դուք նրա 500 բուրլը լրացնէք ուրիշ աղբիւրներով:

Չափազանց մեծ նշանակութիւն ունի ձեզ համար, ինչպէս սեփականատէրը, հետեւալ հանգամանքը: Գուք առաջին անգամ դուք էք զրկւալիս 4000-ի, երկրորդ անգամ 2000-ի, երրորդ անգամ 1000-ի և այլն: Գիցուք դուք մի կերպ փող էք ձեռք բերում և առաջին դրամակալին լուրջաբար նրա իրաւունքը զերտաւս էք համարվում միացած գրաւակալների իրաւունքից, դուք նրա ջնջված անուան տեղ գրում էք ձեր անունը և այգլիսով փոխարկում էք ձեզ վրա նրա իրաւունքը: Այսպէս որ երբ այգլին կը ծախվի, դուք յայտնաբերիք ամենից առաջ դուք կը ստանալ 4000 բուրլ, յետոյ մնացածները իրանց գումարները: Եթէ զոյացած գումարը այնքան փոքր է, որ չէ կարող բաւակալութիւն տալ ընդ գրաւակալներին, պակասորի համար դուք պատասխանատու չէք: Գուք 4,000 բուրլ ստանի էք իբրև առաջին գրաւակալ և այդ գումարի վերաբերութեամբ վնասված գրաւակալները պահանջներ անելու ոչ մի իրաւունք չունեն:

Անկեղծ ուրախութեամբ նուիրում եմ մի քանի խօսք հայոց վոլովիլի կատարման:

60 ամեայ հարուստ ծերունի Կարապետի դերը շատ զեղեցիկ կերպով խաղաց պ. Լիսիցանցը: Կայելով հանդիմանական խորին ուշադրութեան, ես վստահութեամբ կարող եմ ասել, որ դերասանի ոչ մի խօսքը, ոչ մի շարժումն իղուր չանցաւ. բազմիցս պարտք բուռն ծափահարութիւնից հարկարարված էր լինում ընդհատել իր դերը, որպէս զի լուրջութեամբ կրկին հաստատվի: Իսկ երբ բեմի վրա երևեցաւ չորհազեղ օրիորդ Սօփիա թամաշեանց Կարապետի կնոջ՝ Կէկէլի դերում, հասարակաց ուրախութեան չափն անուշաւ միանալիս և շարունակ bravo, bis, բացաւ կանչումները չէին թող տալիս օրիորդին, սկզբում, մի բառ արտասանելու:

Յանկալի կը լինէր, որ մեր գաւառաբնակ քոյրերն էլ, խղճաւակելով ասիական նախապաշարմունքի շղթաները, նոյն լրջմտութեամբ աշակցէին տեղացի երիտասարդների բարի ձեռնարկութեանը, այսպէս միայն գեղեցիկ սեռը կատարած ցանկում գործնով իր հայրենակից չբարձր ուսանողներին: Փառք և պարծանք պարտաճանաչ օրիորդին:

Յանկալի կը լինէր, որ մեր գաւառաբնակ քոյրերն էլ, խղճաւակելով ասիական նախապաշարմունքի շղթաները, նոյն լրջմտութեամբ աշակցէին տեղացի երիտասարդների բարի ձեռնարկութեանը, այսպէս միայն գեղեցիկ սեռը կատարած ցանկում գործնով իր հայրենակից չբարձր ուսանողներին: Փառք և պարծանք պարտաճանաչ օրիորդին:

Սա հիպոտեկական սխտոմբի համառօտ նկարագրութիւնը: Կայնա՞նք այդպէս անձնազան գործողութիւններ անարժէ կարգերի վերաբերութեամբ:

1) Եթէ դուք ուզում էք ծախել այգլին, այն ժամանակը հարկաւոր է միայն յայտնել ուր հարկն է՝ ձեր անունը երրորդ սիւնի մէջ կը ջնջվի և նրա տեղ կը զրեն գնողի անունը: Գնողը իր ա-

նական սնտիպուտութիւնը թէ ժամանակը, որ ամենայն ինչ ծառայեցում է իր պահանջներին: Եարունակում եմ հաշիւներս թատրոնի վերաբերութեամբ:

Պ. Մերգոյեանցը մոցիբուլ խափի դերում բաւակալին հմտութիւն ցոյց տուաւ. շատերը նորա մէջ դերասանական քանքար են նշմարում: չէ կարելի նրանց հետ չը համաձայնվել: Պ. Զարկարեանցը յաջողութեամբ կատարեց Նիկոլի դերը՝ պարտք ապագայում կարող է լաւ jeune premier լինել:

Օրիորդ Աւստադեանցի դերը այնքան չնչին էր, որ դժուար է նորա խաղի մասին մի որոշ դատաւար կարողել:

Ծառայ Կիրակոսի դերը թէև նշանաւոր էր, սակայն անփորձ պ. Լեֆիաճեանցը ոչինչ չը կարողացաւ ստեղծել դրանից և պահանջել էլ աւելորդ է, յայտնի բան է: Միայն գովել է պարտի նպատակը, որ է—օգնել իր ընկերներին ըստ կարողութեան չափ:

Երբ վարաբուրը իջաւ, դմայված հանդիսականները չորս, հինգ անգամ կոչելով օրիորդ թամաշեանցին, Լիսիցանցին, Մերգոյեանցին և Զարկարեանցին առատօրէն վարձատրեցին նոյա ծափահարութիւններով, որոնցից թնդում էր անհղին դահլիճը:

Ներկայացումից յետոյ տեղի ունեցաւ մի շատ չքեղ և դուրսձալի պարահանդէս, ուր ի միջի սպոյց, թէ հայերը թէ վրացիք, և թէ մասնատական զինուորականներ, մուսուսալով միանգամայն իրանց ցեղական ծագումը և խոր դաւանութիւնը լեզուական պարբերին: Իսկ հասարակութիւնը այս միջոցին ծափահարում էր նոյա: Ամեն անգամ երբ պիտի լեզուական սկսվի, հանդիսականները կապում են դահլիճում մի մեծ շրջան աթոռներից, և դոյա ետեկց կանգնած նայում են պարուները վրա, որոնք մինը սիւսի ետեկց իր ներքին, հանդէս է դուրս գալիս շրջանի մէջ տեղը: Շրջան կապող աթոռների վրա նստած են լինում կանայք և օրիորդներ, վրան մի իբրև թող էականը նոյա չեն կարողանում մտնելու շրջանին, որի չորս կողմում, ինչպէս ասացի, անբակտելի շղթայով կանգնած են լինում տղամարդիկ: Պարտք հայ լինել, թէ վրացի և թէ մասնատական ոչ ոք չէր հարցնում և ամենքը ծափահարում էին: Եթե՞ր, ժպիտ, ուրախութեան անկեղծ ձայներ հասարակաց էին: Կողմնակի զինուոր պիտի դարձանար այն համերաշխական վրա, որ թագաւորում էր այս երկրորդ խառնի-ծաղանձ բազմութեան մէջ: Այստեղ, կարծես, չը կային ոչ հայ, ոչ վրացի, ոչ մասնատական և ոչ էլ կաթոլիկ. դուք մի երկրի դաւանութիւն էին, դրանք կովկասցիք էին, որոնցից հասարակ հայրենիքի՝ հեռաւորութիւնը ի մի ժողովուրդ էր ձուլել:

Օրինակելի համերաշխութիւն: Առաւօտեան և-

նունը գրուելուց յետոյ դաւանում է այգու լրակատար տեղը, մի և նոյն ժամանակը իր վրա վերցնելով այգու հետ կապված պարտականութիւնները, սահմանափակութիւնները և պարտքերը:

2) Եթէ դուք ուզում էք պարգեւել մէկին ձեր այգին,—գարձաւ ձեր անուան տեղ գրվում է նրա անունը, ում պարգեւում էք—ուրիշ ոչինչ:

3) Գրաւ. դնել այգին, ինչպէս տեսանք, դուք կարող էք մի քանի անգամ: Գուք յայտնում էք այս կամ այն կապիտալիստին կամ հիմնարկութեանը, որ այգու գրաւակալում կամենում էք այս ինչ գումարը վերցնել: Կապիտալիստը կամ կրեդիտական հիմնարկութեան ներկայացուցիչը գնում են այնտեղ, ուր պահվում են հիպոտեկական գրքերը: Այգու նկարագրութիւնը կարգաւորվում է ձեր անունը երրորդ սիւնի մէջ տեսնելով: Կրանք առանց կասկածելու տալիս են ձեզ այս կամ այն գումարը: Նրանց անունները կարգով գրվում են չորրորդ սիւնի մէջ: Ինչ կարծեք որ գրաւակալները ձեզ փող աւուրց առաջ ամեն կերպ քննում են այն հարցը, թէ այգու գինը կարող է արդեօք ապահովագնել իրանց գումարները թէ չէ:

Սրանով մենք վերջացում ենք մեր յօդուածը: Եթա ունենք որ սրանից յարգելի հասարակութիւնը կարող է մի թեթիւ հասկացողութիւն կազմել մոցնելի սխտոմբ վրա: Երբ այս վերջինը կը գրուանի բոլորովին և կը յայտնվեն մանրամասնութիւնները, մենք խոստանում ենք ընդարձակ կերպով հարցողել «Մշակի» ընթերցողներին:

Մտակալ Ս. Կապեանց

կը լինի հասկացողութիւն կազմել այգու վրա (ինչ տեղ է գտնվում, որքան տարածութիւն ունի, ինչ արժի...)

2) Երկրորդ սիւնի մէջ նշանակվում է թէ ինչ մշտական պարտականութիւններ կամ սահմանափակութիւններ (ограничения) կան ձեր այգու վրա: Օրինակ, այգու տեղը դիցուք պարտական է մշտապէս տարեկան մի որոշ գումար նուիրել եկեղեցուն կամ մի որ և է հիմնարկութեան կամ մի մասնաւոր անձի և նրա ժառանգներին, պարտական է առանց վիճելու ճանապարհ տալ իր այգով անց ու դարձ անտղներին և այլն:

3) Երրորդ սիւնի մէջ գրվում է այգու տիրոջ, այսինքն ձեր անունը, յայտնելով մի և նոյն ժամանակը թէ՛ երբ էք գնել, կամ ինչպէս էք առնասարակ ձեռք բերել այգին և այլն: Չեր անունը այդ սիւնի մէջ գրելը անհղին նշանակութիւն ունի ձեզ համար: Այն բոլորից երբ ձեր անունը գրվում է այգու, դուք դառնում էք այգու անվիճելի և հաստատ սեփականատէրը, մինչև որ դուք ինքներդ չը ծախեք նրան կամ մի ուրիշ կերպ շտապարացնէք (отчуждать): Չեղ չէ հարկաւոր ոչ դարաւալ, ոչ ВВОДНЫЙ ЛИСТЪ,—բաւական է միայն որ ձեր անունը գրված է, և դուք կարող էք ձեր իրաւունքը բոլորովին ապահով համարել:

4) Չորրորդ սիւնի մէջ կարգով գրվում են գրաւակալների անունները: Գիցուք թէ ձեր այգին, որ արժէ 8000 բուրլ, հարկաւոր եղածին պէս մի քանի անգամ դուք գրաւ էք դնում դահազան կրեդիտական հիմնարկութիւններում

կամ մասնաւոր փողատէրերի մաս: Օրինակ, առաջին անգամ վերցնում էք մէկից 4000 բ.,—չորրորդ սիւնի մէջ առաջին տեղում գրվում է առաջին գրաւակալի անունը և ժամանակը, երբ նա տուել է ձեզ այդ գումարը:

Առանց գրան վճարելու դուք վերցնում էք մի ուրիշից 2000 բուրլ,—երկրորդ տեղում գրվում է երկրորդ գրաւակալի անունը: Չը վճարելով այդ երկուսին դուք նորից վերցնում էք 1000 բուրլ,—երրորդ տեղում գրվում է երրորդ գրաւակալի անունը: Այսպէս կարգով գրվում են բոլոր գրաւակալների անունները, նրանց տուած գումարները և ժամանակը:

Եթէ ձեր այգին այնպիսի լաւ գրութեան մէջ է, որ նրան մինչ 8000 բուրլի կը տան, դուք կարող էք նրան մի քանի անգամ ևս գրաւ դնել, մինչև որ բոլոր գրաւակալներից ստացած գումարը կը հասնի այգու գինին:

Եթէ դուք ստանկանում էք կամ առնասարակ անկարող էք երևում վճարելու գրաւակալներին, այն ժամանակը այգին ծախվում է աճուրդով: Բոլոր գրաւակալները ստանում են իրանց փողերը հերթով՝ ով որ առաջ է տուել, նա առաջ էլ ստանում է: Եթէ այգին ծախվում է աւելի քանով, մնացորդը յանձնվում է ձեզ: Իսկ եթէ պակաս գնով, օրինակ, 6,500 բուրլով, այն ժամանակը առաջին գրաւակալը ստանում է 4000, երկրորդը 2000, իսկ երրորդը մնացած 500 բուրլ: Նա կորցնում է 500 բուրլ: Կը նշանակի ում ժամանակը առաջ է, նրա իրաւունքը աւելի զերտաւս է համարվում: Պէտք է նկատել որ երրորդ գրաւակալը իրաւունք չունի

